



05/5121-17  
1/02.2/4338-17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 494 - ՂԷ

«03» Տպիսիս 2017 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017  
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի ՆԻՍՏԻ N 14 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԿԵՏՈՎ  
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԾ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՅԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 12-ի նիստի N 14 արձանագրության 2-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման N 2 հավելվածի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրից բխող ՀՀ ԱԻՆ միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի:



2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված միջոցառումների ցանկով սահմանված պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին՝ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել միջոցառումների կատարումը և դրանց կատարման ընթացքի մասին հաշվետվությունների ներկայացումը ՀՀ ԱԻՆ աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչություն՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում:

3. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության պետին՝ ամփոփել սույն հրամանի 2-րդ կետով ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին:

5. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՏՈՆՈՅԱՆ

